ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРАГАЦОТН
ОБЩ . АНТАРУТ

31 հունվարի 2017 թ.
N - 04

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ. ԳՅՈՂՋԱԼՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ

Կից ներկայացվում է ՀՀ Արագածոտնի մարզի Անտառուտ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13 -ի հերթական 1-ին նիստի N 2 - Ն , 3 –Ն, 4-Ն և 5-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _________ / Հ. ՋԱՔԱՐՅԱՆ /

Կ. Տ.

Ելք
ՀՀ Արագ[illegible] Լաւարանի
աշխ[illegible]ւթյու-
[illegible]
« 01 » 02 2017
Մուտք № 1730-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

հեռ.093-45-45-09

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 13 » հունվարի 2017 թվականի N 2 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1կետի 5-րդ ենթակետի պահանջներով, *Անտառուտ համայնքի ավագանին*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ընդունել ի գիտություն Անտառուտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի 4- րդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի ( կցվում է ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից :

Համայնքի ավագանի՝ Կողմ ( 5 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

1. Էդիկ Արշակյան
2. Զորիկ Հովսեփյան
3. Վահե Հունանյան
4. Վահան Սարգսյան
5. Վահագ Հունանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ /Հ. ԶԱՔԱՐՅԱՆ/

2017 թ. հունվարի 13
հ. Անտառուտ

Հավելված

Անտառուտ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13 թիվ 2 -Ն որոշման

## Անտառուտ համայնքի 2016թ-ի 4-րդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում

(հազար դրամով )

### Վարչական բյուջե

| Հ/հ | Եկամուտներ | Բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված |
|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 579.8 | 695.4 |
| 2 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 915.1 | 762.2 |
| 3 | Հողի հարկ | 387.9 | 462.7 |
| 4 | Վարձակալած հողերի վարձավճար | 210.0 | 422.3 |
| 5 | Տեղական տուրքեր | 16.0 | 16.5 |
| 6 | Դոտացիա | 5257.1 | 5257.1 |
| 7 | Այլ եկամուտ | 00 | 651.2 |
| | Տեղական վճար | 00 | 140.3 |
| | ընդամենը | 7365.9 | 8407.7 |

| Հ/հ | Տնտեսագիտական հոդվածներ | Ծախսեր | Բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված |
|---|---|---|---|---|
| | 4111 | Աշխատատավարձ | 5891.5 | 5874.3 |
| 2 | 4212 | Էներգետիկ ծառայություններ | 60.0 | 60.0 |
| 3 | 4214 | Կապի ծառայություններ | 72.0 | 72.0 |
| 4 | 4221 | Գործուղում | 17.0 | 16.6 |
| 5 | 4232 | Համակարգչային ծառայություններ | 20.0 | 20.0 |
| 6 | 4234 | Տեղեկատվական ծառայություններ | 63.0 | 28.8 |
| 7 | 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 0.0 | 0.0 |
| 8 | 5122 | վարչական սարքավորումներ | 50.0 | 0.0 |
| 9 | 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 40.0 | 00 |
| 10 | 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 50.0 | 20.0 |
| 11 | 4729 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 250.0 | 250.0 |
| 12 | 4819 | Նվիրատվութ. այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 20.0 | 19.1 |
| 13 | 4891 | Վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում ֆ/բ | 482.4 | 0.0 |
| 14 | 4233 | Աշխատակազմի մասնագիտական ծառայություն | 0.0 | 00 |
| 15 | 4241 | մասնագիտական ծառայություն | 400.0 | 400.0 |
| 16 | | | 00 | 00 |
| | | Ընդամենը | 7415.9 | 6760.8 |

### Ֆոնդային բյուջե

| Հ/հ | Եկամուտներ | Բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված |
|---|---|---|---|
| 1 | Տարեսկզբի ազատ մնացորդ | 1808.8 | 1808.8 |
| 2 | Հողի օտարումից մուտքեր | 00 | 330.6 |
| 3 | Վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում | 482.4 | 0.0 |
| | Ընդամենը | 2291.2 | 2139.4 |

| Հ/հ | Տնտեսագիտական հոդվածներ | Ծախսեր | Բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված |
|---|---|---|---|---|
| 1 | 5112 | Գազաֆիկացում | 1941.2 | 1505.1 |
| 2 | 5122 | սարքավորումների ձեռքբերում | 50.0 | 0.0 |
| 3 | 5133 | գեոդեզիական քարտեզագրման ծախսեր | 300.0 | 0.0 |
| 4 | | | 00 | 0.0 |
| | | Ընդամենը | 2291.2 | 1505.1 |

Անտառուտ համայնքի ղեկավար / Հ. ԶԱՔԱՐՅԱՆ /

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

հեռ.093-45-45-09
Անտառուտ համայնք, 1-ին փողոց 15

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» հունվարի 2017 թվականի N 3 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ի ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ-ԻՆ ԳՈՐԾՈՂ « ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ » ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ N 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով,« Տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդև14-րդ հոդվածների , « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետի և « Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով *Անտառուտ համայնքի ավագանին*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Անտառուտ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը

1/.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .
1/ ենթակետից հանել « տեղական տուրքը սահմանվում է » բառերը.

Հիմնական օբյեկտների համար՝« օբյեկտների » բառը փոխարինել շենք շինությունների բառերով

ա/ մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի. այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար «օբյեկտներ »բառը փոխարինել շենք շինությունների բառերով. 4500 դրամ.

բ/ սույն կետի « ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար« օբյեկտներ»բառը փոխարինել շենք շինությունների բառերով.

- 201-ից մինչև 500ք.մ/ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9000 դրամ,

- 501-ից մինչև 1000ք.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի ևշինությունների համար՝15000դրամ

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

գ .Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ 20000 դրամ

- մինչև 20ք.մ.ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 դրամ.

- 20 և ավելի ք.մ.ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ

3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 1500 դրամ

9/ Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար `

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություն-ների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 500դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.010դրամ

բ. ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 1500դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.010դրամ

3/ համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա/ Հիմնական շինությունների ներսում

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5.001դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10.001դրամ

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.001դրամ

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 20.001դրամ

բ . Ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1.001դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2.001դրամ

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4.001դրամ

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1/ համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1000 դրամ

2/ ճարտարապետական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետ՝ շենքերի և շինությունների կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ

5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 2-ից

3.Ուժը կորցրած ճանաչել Անտառուտ համայնքի ավագանու 2016 թ-ի նոյեմբերի14-իN40-նորոշումը

Ավագանու անդամներ՝

Կողմ ( 5 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

1. Էդիկ Արշակյան
2. Զորիկ Հովսեփյան
3. Վահե Հունանյան
4. Վահան Սարգսյան
5. Վահագ Հունանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ՀՈՎԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ/

2017 թ. հունվարի 13
հ. Անտառուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13 »հունվարի 2017 թվականի N 4 - Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ /ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԵՋ/ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի՝ «Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով Անտառուտ համայնքի ավագանին .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Յաստատել Անտառուտի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվա-քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը փոփոխված համաձայն հավելվածի (կցվում է).

ա/ Աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիրը 3.1-1/ 78000 դրամի փոխարեն կարդալ 79500 դրամ :

բ/ Աշխատակազմի առաջտար մասնագետ /ծածկագիրը 3.1-2/ 78000 դրամի փոխարեն կարդալ 79500 դրամ:

գ/Աշխատակազմի առաջտար մասնագետ /ծածկագիրը 3.1-3 78000 դրամի փոխարեն կարդալ 79500 դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017թ-ի հունվարի 2-ից.

Ավագանու անդամներ ՝ Կողմ ( 5 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

1. Էդիկ Արշակյան

2. Զորիկ Հովսեփյան

3. Վահե Հունանյան

4. Վահան Սարգսյան

5. Վահագ Հունանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Հ. ԶԱՔԱՐՅԱՆ/

2017 թ. հունվարի 13
հ. Անտառուտ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Անտառուտ համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 13
N 4-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 5
Հաստիքային միավորները՝ 5

| Հաստիքի անվանումը | Համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի ծածկագիրը | Հաստիքի միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | - | 1 | 138000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 100000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 79500 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 3.1-2 | 1 | 79500 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 3.1-3 | 1 | 79500 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ /Հ. ԶԱՔԱՐՅԱՆ/

2017 թ հունվարի 13
հ. Անտառուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

հեռ.093-45-45-09
Անտառուտ համայնք, 1-ին փողոց 15

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 13 » հունվարի 2017 թվականի N 5- Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և « Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Անտառուտի համայնքի 2017 -2021թթ. հզամյա զարգացման ծրագիրը *Անտառուտ համայնքի ավագանին*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Անտառուտ համայնքի 2017 թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասը փոփոխություններով՝ համաձայն կից ներկայացված N 1 հավելվածի

2. Հաստատել Անտառուտ համայնքի 2017թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասը փոփոխություններով՝ համաձայն կից ներկայացված հավելվածների

ա. Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման / N 2 հավված /

բ. Ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման / N 3 հավված /

գ. Ըստ բյուջետային ծախսերի գործառնական տնտեսագիտական դասակարգման / N 6 հավված/

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 2-ից.

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 14-ի « Համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին » N 43 -Ն որոշումը :

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝ կողմ / 5 / դեմ / 0 / Ձեռնպահ / 0 /

1. Էդիկ Արշակյան

2. Զորիկ Հովսեփյան

3. Վահե Հունանյան

4. Վահան Սարգսյան

5. Վահագ Հունանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՀՈՎԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ

2017 թ. հունվարի 13
հ. Անտառուտ